

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կիրակի, հոկտեմբերի 2-ին, առաւօտեան 11 ժամին կը կատարվի

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՏԻՍԵԱՆԻ

Հոգեհանգիստը քաղաքացիացի և Գեորգ եկեղեցւոյ, Գլխաւոր փողոցի վրայ, որի
մասին հանգուցեալի այրին տեղեկացնում է հանգուցեալի յիշատակը յարգել
ցանկացող ազգականներին և ծանօթներին:

1—1

ԲՈՎԱՆԵՐԿՐՈՐԴՆԵՐ

Քաղաքակրթութեան լոգիկան.— Ենթիւն ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Գործով են մարդիկ ճանաչվում. Հա-
յոց մասուրը ներկայ թւին. Թիւրքաց Հայաստա-
նի մշակները. Մատենադրութիւն. Նամակ Ա-
խալախայից. Նամակ խմբագրութեան. Ներքին
լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Չինա-կապոնա-
կան գործերը. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լու-
րեր. — ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱՅԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Փոխադարձ
օգնութեան ընկերութիւն.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Այն պատերազմների մէջ, որ մղում են
կարգապահ պետութիւնները վայրենի եր-
կիրներում, անկասկած, զլխաւոր դեր
խաղում են սեփական շահերը. բայց դրա
հետ միասին այդպէս դեր է կատարում և
քաղաքակրթութեան տարածելու ցանկու-
թիւնը, լուսաւորութեան համար ծանա-
պարհ բանալու միջոցը:

Եւրոպացիները, մանկով Աֆրիկայի խոր-
քերը, իրանց պարտաւորութիւնն են հա-
մարում իսկոյն վերացնել գերեզմանու-
թիւնը, մոցնել հաստատուն օրէնքներ, կա-
յուն միջազգային յարաբերութիւններ և
ընտելացնել բնիկներին եւրոպական քաղա-
քակրթութեան:

Երկու հարեան երկիրներ, որոնցից մէկը
քաղաքակրթված է, իսկ միւսը անքաղաքա-
կիրթ, միմեանց հետ երկար ժամանակ
հաշտ ապրել չեն կարող: Հայեացքների
զանազանութիւնը, մարդկային կենցաղա-
րութեան հիմնական սկզբունքների տար-
բեր ըմբռնումը և գործադրութիւնը շուտ
թէ ուշ կառաջացնեն այդպիսի հարեան-
ներին մէջ ընդհարումներ, որոնց հետեանքը
միայն այն չէ լինում, որ մի ազգ յաղթող
է հանդիսանում միւսի վրայ, այլ և այն,

որ յաղթողը աշխատում է ազդել յաղթ-
վածի կենցաղաւարական պայմանների վրա:
Պատմութիւնը մեզ ներկայացնում է
փաստեր, երբ կոպիտ, ֆիզիքական ոյժը
կարողացել է կործանել և ճնշել քաղաքա-
կիրթ ազգութիւններին, և նոյն իսկ այժմ
կան կուլուրական տարբեր, որոնք հե-
ծում են վայրենի, ասիական ճնշման տակ.
բայց այն յաղթանակը, որ տարել է
քաղաքակրթութիւնը հենց ներկայ տան-
կներով դարձւում, մեծ յոյս է տալիս,
որ այսուհետեւ նա անընդձեռն կը լի-
նի և կը նուաճի բոլոր այն տեղերը,
որոնք մնում են դեռ վայրենութեան մէջ:

Այդ տեսակետից շատ միջկարգական է,
որ մի այնպիսի երկիր, ինչպէս Եւրոպան
է, որ ահա մի քանի տասնակ տարիներ
շարունակ արագ և մեծ քայլերով աշխա-
տում է առաջ գնալ և իւրացնել եւրոպա-
կան քաղաքակրթութեան սկզբունքները,
այժմ ինքն է հանդիսանում իբրեւ քաղա-
քակրթութեան ներկայացուցիչ, և իբրեւ
քաղաքակրթութիւն տարածող աւելի ան-
զարգացած երկիրներում:

Եւրոպայից յաղթող իր գործերով պա-
շարել Կորէյի թագաւորութիւնը և ստի-
պել, որ այդ բռնակալ և ծայրահեղ եւրո-
պատեղեք երկիրը բարեփոխութիւններ
մտցնի պետական և հասարակական կեան-
քի մէջ:

Եւ միթէ՞ քաղաքակրթութեան փայլուն
յաղթանակ չէ այն հրովարտակը, որ հրա-
տարակել է Կորէյի թագաւորը մի քանի
շաբաթ արանից առաջ:

Ահա թէ ինչ է հրամայում այդ հրովար-
տակը.— Մարդավաճառութիւնը արգելվում
է: Պաշտօնները կորցնում են այսուհետեւ ի-
րանց ժառանգական բնաւորութիւնը և
դառնում են մատչելի բոլոր դասակարգերի
համար անխորի: Յանցանքի պատաս-
խանաւորութիւնից ազատվում են յանցաւոր-

ները ազգականները և մէջքը ծանրանում է
միայն յանցանք գործողի վրա: Ապահար-
զանից յետոյ երկու կողմն էլ ամուսնա-
նու իրաւունք են ստանում: Հպատակներից
իրաքանչիւրը իրաւունք ունի այսուհետեւ
իր դրաւոր կարծիքները յայտնել պետական
գործերի ընթացքի մասին: Բարձրատիճան
անձերին մինչև գետին դուրս տալը վերաց-
վում է: Սուզի օրէնքով երեք տարի ան-
գործ մնալը վերացվում է և սգաւորը կա-
րող է ազատ գործ կատարել: Կաշառակե-
րութիւնը պէտք է խիստ պատժի և այլն:
Այդ տեսակ ոգի ունի այն փոփոխութիւնը,
որ կատարվիլ է Կորէյում եւրոպացիներին ար-
շաւանդից յետոյ և որով հաստատվում են
քաղաքակրթութեան նոր սկզբունքներ այդ
խաւար երկրի մէջ:

Կորէյի քաղաքացիան համար եւրոպական
արշաւանքը մի փրկարար հոլով է, որ ախ-
տահան է անում այդ երկրի նեխված հա-
սարակական ծախիճը, մի արմատական
զեղիւնֆիկցիոն է, որ պէտք է եւրոպական
լուսաւորութեան մարտը օղի հասնել բերի
այդ երկրի հասարակական կեանքի հա-
մար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾՈՎ ԵՆ ՄԱՐԻԿ ԶԱՆԱՉՎՈՒՄ

Մի քանի օր է արդեն մեր քաղաքում հիւր է
հայոց կաթողիկոսութեան տեղակալ Երեմիա ե-
պիսկոպոսը, որ եկել է Թիֆլիս բժշկելու հա-
մար:

Երեմիա եպիսկոպոս Գալստեան այժմ մեր հո-
գեւոր բարձր իւրաքանչիւր մէջ բռնում է մի
պատկառելի տեղ, և նրա անունը վայելում է մի
որոշ աստիճանի յարգանք հայոց հասարակու-
թեան մէջ:

Սրանից մի քանի տարի առաջ Եւրոպայի վա-
րդի դուրս համարան ոչ որի յայտնի չէր Երեմիա
եպիսկոպոսի անունը. Մակար կաթողիկոսի օրով
նրա կատարած դերը Եւրոպայում այնքան ան-
նշան էր, որ նրա մասին ոչ խօսող կար և ոչ էլ
նրա անձով հետաքրքրվող:

Բայց ահա մեռա Մակար կաթողիկոսը, և դո-
ւութիւն ունեցող օրէնքների համեմատ, Երեմիա
եպիսկոպոսը դարձաւ տեղակալ և իր ձեռքն ա-
ռաւ հոգեւոր վարչութեան ղեկը կաթողիկոսական
գահի թափուր ժամանակ:

Ներքէ Բացի դրանից, համաձայն կանոնադրութեան
13-րդ յօդուածի՝ ընկերութիւնը որ և է մի ան-
դամի համար գործ, աշխատանք զանազան պէտք
է ստանայ առաջին ամսվայ ուժեղ կամ աշխա-
տանքի 10%—ը:

Կանոնադրութեան մէջ իսկական անդամների
անդամավճարների մասին յիշած որոշ չէ: 24-րդ
յօդուածը անդամավճարների մասին առում է.
Իսկական (տարեկան) անդամները անդամ զըր-
վելուց վճարում են ընկերութեան 10% իրանց
յայտարարած գումարից և ապա իւրաքանչիւր
տարի նոյն գումարից 30%:

Յայտարարելի գումարը.— Ինչպէս բացատրվում
է ծանօթութեան մէջ.— կարող է լինել 200 միւ-
շէ 2000 ռուբլի: Այն անդամը, որը իր ժամանա-
կին չի վճարի տարեկան պարտաւորված գումա-
րը, կը զրկվի անդամակցութեան իրաւունքից.
բացառութիւն կազմում են անգործ անդամները.
վերջիններս, եթէ անկարող են ժամանակին վճա-
րել, նրանց թոյլատրվում է յետոյ վճարել, գործի
մասնեցուց, սակայն այն պայմանով միայն, որ եր-
կու ամսվայ ընթացքում պարտաւորված լրացնեն
ամբողջ տարվայ տուրքը:

Թէ անդամավճարները և թէ ուրիշ եկամուտ-
ներ միանգամ մանկով ընկերութեան գումարկը
դառնում են ընկերութեան սեփականութիւն.

Կաթողիկոսական գահը սովորականից աւելի եր-
կար թափուր մնայ. ամբողջ երկու տարի, և այդ
երկու տարին էլ հանգամանքները այնպէս դասա-
ւորվեցին, թէ Եւրոպայի մէջ և թէ Եւրոպայից
դուրս կրքերը այնպէս լարվեցին, որ հարկաւոր
էր մեծ տոկոսութիւն, մեծ եռանդ և մեծ ան-
կողմնապահութիւն, որպէս զի կարելի լինէր
առանց սայթաքելու, առանց դժգոհութիւններ
յարուցանելու՝ առաջ տանել գործերը և կառա-
վարել Եւրոպայի:

Եւ Երեմիա եպիսկոպոսը պատուով տարաւ իր
պատասխանատու գործը, և պատուով դուրս եկաւ
իր գծուր կացութիւնից:

Երկու տարվայ տեղակալութեան օրով նրա
գործերը ստիպեցին լուելնրա անձնական թշնամի-
ներին, ստիպեցին նրանց գէթ իրանց սրտի խոր-
քում խտտվանել, որ յիշաւի, Երեմիան բարձր
է կանգնած իր շուրջը գտնվող թիւում և դո-
ւելու չնորք չունեցող մարդկանցից.— նրա օրով
կարդի բերվեցին շատ վարչական խառնված գոր-
ծեր. դէպի հոգեւոր կոչումը գրաւեցին ուսուցիչ ե-
րիտասարդներ. ձեռնարկեցին մի շարք տնտե-
սական բարեփոխումներ վանքի մէջ. հաշ-
ւի տակ գրվեցին Եւրոպայի ծախսերը. վեր-
ջապէս նա ձեռնարկեց մի հոյակապ շինու-
թեան, որ այսօր Եւրոպայի խաբուր խոցե-
րի փայլ է կազմում. մի խօսքով, նկատելի էր,
որ նա գործում է և գործելու էլ չնորք ունի:

Եւ ահա այդ ժամանակ միայն «Մշակը», որ
տեղեկութիւն անդամ չունէր Երեմիայի անձնաւո-
րութեան մասին, ուշադրութեամբ հետեւեց նրա
գործերին, և միայն նրա գործերի վրա
հիմն վեցում՝ արտայայտեց իր համակրութիւնը
այդ եպիսկոպոսին, զովից նրա գործերը, պաշ-
տան հանդիսացաւ. նրա լաւ գործերին:

Վերին աստիճանի ճիշդ կերպով դժգոհելով
տեղակալի անձնաւորութիւնը, Գրիգոր Արծրունին
ահա թէ ի միջի այլոց ինչով է բացատրում նրա
ազդուութիւնը. «Երեմիա եպիսկոպոսը, որպէս
վարչական մարդ, չափից դուրս համեստ է. նրա
ոյժը նրա մէջն է, որ նա լուծ է ուրիշների
խորհուրդներին, դիտէ շրջապատել իրան խորհր-
դատուներով. բաւական չէ որ նա անձնաւորութեան
չէ, բայց աննախաձեռն էլ է ինչպէս էլ գործողե-
րի սով լինի մեր այժմեան հոգեւորականութեան
մէջ, տեղակալը այնքան հոտ առ ու թ լւ իւն ունի,
որ դիտէ, որքան հնար կայ, ընտրել մարդիկ
այդ հոգեւորականութեան միջից... Եւ դա արդէն

այլ ևս ոչ մի անգամ իրաւունք չունի իր տուածը
յետ վերցնել, կամ որ և է կարգադրութիւն անել
գրաւարկի մէջ ունեցած իր վճարների մասին:
Նոյն իսկ այն դէպքում, երբ որ և է անդամ ինք-
նակամ հրաժարվում է անդամակցութիւնից կամ
հրաժարեցնելով է ընդհանուր ժողովից.— այն ժա-
մանակ ևս զրկվում է ընկերութեան մէջ ունե-
ցած գումարից. նրան արգելվում է յետ պահան-
ջել իր տուած անդամավճարները...»

Իսկ եթէ անգամ ոչ հրաժարվում է ինքնակամ
և ոչ հրաժարեցնելով է ընդհանուր ժողովից,
այլ պաշտօնով, նոյն լաւագէտից գործով, թէկուզ
փոխադրվում է Բագուի չրջանից դուրս մի ուրիշ
քաղաք, այն ժամանակ անդամը դարձեալ անդամ
պէտք է համարվի, թէ պէտք է զրկվի իրաւունքից.
այն մասին կանոնադրութիւնը բռնում է. մեր կար-
ծիքով այդ ուշադրութեան արժանի կէտ է, և
պէտք է առաջուց պարզել:

Երեմիայից, որ մի գործակատար, որը ծառայում
է, դիցուք, որ և է ընկերութեան կամ գործակալու-
թեան մէջ, որոնք իրանց ձեռքերը ունեն դասա-
կան քաղաքներում, իսկ այդպիսիները քիչ չեն
Բագուում, 10—25 տարի Բագու պահուց յետոյ
Վրացիները իրանց գործակատարին բարեհա-
ճում են փոխադրելու ուրիշ քաղաք, արդ, այսպի-
սի դէպքերում ընկերութեան գործակատար ան-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓՈԽԱՎԱՐՁ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Վաղուց է արծարծվում Բագուում մասնաւոր
ծառայողների կամ մասնաւոր աշխատանքով պա-
րապոյիների փոխադարձ օգնութեան ընկերութեան
հիմնելու հարցը:

Տեղական «Բազնի» լրագիրը այդ հարցի առի-
թով բաւական յոգեւածներ է գրել և յորդորներ
կարդացել: Այսօր նոյն իսկ նա չէ դադարում
հրապարակ հանել նորահաստատ ընկերութեան
արած ամեն մի քայլը: Պէտք է խոստովանվել,
որ այդ լրագրի խմբագիր Սախալինսկին, համակ-
րութեամբ վերաբերվելուց զատ, ջերմ աջակցու-
թիւն է ցոյց տալիս գործին. սկզբնական բոլոր
նախապատրաստութիւնները համարեա նրա մաս-
նակցութեամբ են տեղի ունեցել. ընդհանուր ժո-
ղովները նրա անմիջական մասնակցութեամբ և
աջակցութեամբ են կատարվում. բացի դրանից,
նա իր խմբագրութեան սեփականները առժամա-
նակ թողել է ընկերութեան տրամադրութեան
տակ: Սախալինսկուն՝ իր մատուցած ծառայու-
թիւնների համար, ընկերութիւնը վարձատրեց

մեծ արժանաւորութիւն է: (Մշակ 1892, № 46):

Նոյն իսկ Վեհափառ Կաթողիկոսը Էջմիածին հասնելով և իր աչքով տեսնելով Ներսիսյի ա-րածները, կառուցած շինութիւնները, դոհունա-կութիւն յայտնելով՝ շինարար եպիսկոպոս ա-նուանեց նրան:

Եւ ճշմարիտ, Ներսիսյի կատարած գոր-ծերը նրա անունը բարձրացրին, նրա անունը համակրելի դարձրին հայոց հասարակութեան մէջ: Եւ ահա այսօր, այդ համեստ, Էջմիած-նի վանքից դուրս չեկած, նոյն իսկ միջ-նակարգ ուսումից դուրի եպիսկոպոսը, — մի յարգելի տեղ է բռնել մեր այժման աղքատ, գործողներից զուրկ հոգևորականութեան մէջ:

Եւ եթէ Ներսիս եպիսկոպոսը կը շարունակէ համակրելի ընթացքով գնալ, կը շարունակէ գործել, խելացի և անձնուէր կերպով ծառա-յել եկեղեցուն և ժողովրդին, որի սպասաւորն է նա, — միշտ նրա կողմն կը լինի թէ հայոց հա-սարակութեան և թէ Մշակի՝ անկեղծ համակ-րութիւնը:

Մարդիկ գործով են համակրութիւն գտնում:

ՀԱՅՈՑ ՄԱՄՈՒԼԸ ՆԵՐՍԻՍԻ ԹԻՒՆ

Վիեննայի Մխիթարեանները, հայոց մամուլի հարկարմեակի առիթով, ինչպէս յայտնի է, հրատարակել են մի նկար, որը պարունակում է այն բոլոր թերթերի անուններն ու պատկերները, որոնք հրատարակվում են ներկայ 1894 թիւին, ի-րանց խմբագիրների կամ աշխատակիցների լու-սանկարով միասին:

Մեր խօսքը, ի հարկէ, այդ պատկերի մասին չէ, որ ինքն ըստ ինքեան մի չնչին բան է. մենք միայն օգուտ ենք քաղում այդ ժողովա-ծուից մի քանի խօսք ասելու մեր ժամանա-կակից մամուլի ղեկավարների մասին:

Այն նկարը, որ մենք ունենք մեր ձեռքի տակ, տպագրած է Ռուսաստանի համար. ուստի այդ-տեղ չեն մտել արտասահմանի մի քանի հրատա-րակութիւններ: Նկարից երևում է, որ այժմ Ռուսաստանում հրատարակվում են 10 հատ պար-բերական հրատարակութիւններ. Թիւրքիայում 12 հատ, Պարսկաստանում 1 հատ: Բացի դը-րանցից, արտասահմանում՝ 6 հատ:

Նկարի մէջտեղը դրած է առաջին հայ լրա-գրի (1794) «Աղբարարի» խմբագրի ցարութիւնը. Դմառնեանի պատկերը, իսկ չորս կողմը միւս լը-րագիրների խմբագիրների կամ գլխավոր աշխա-տակիցների պատկերները: Ռուսաստանում հրա-տարակվող լրագիրների, ամսագիրների կողքին դը-րած են պաշտօնական խմբագիրների պատկերները. իսկ Թիւրքիայում հրատարակվող լրագիրների խմբագիրներից մի քանիսի փոխարէն դրած են ոչ թէ պաշտօնական «տէր և տնօրէնների» պատկերները, այլ այն մարդկանց, որոնք այդ լրագիրների գլխավոր աշխատակիցներն են. օ-րինակ, «Հայրենիք» լրագրի մօտ, փոխանակ տէր-տնօրէն Դահանգաբանի պատկերի, տպա-գրած են նրա երկու գլխավոր աշխատակից-

ների՝ Ա. Արիփարիանի և Բաշալեանի պատ-կերները. «Արեւելքի» կողքին տպագրած է Տ. Ար-փարիանի և Քէչեանի պատկերները և այլն, թէև այդ մարդիկ այդ լրագիրների պաշտօնակա-ն խմբագիրները չեն:

Նայում էք այդ բոլոր լուսանկարներին, որոնք թւում մօտ 20 հատ են: Մարդու աչքը այդ բոլոր նկարների մէջ հազիւ է գտնում մի քանի պատ-կերներ, որոնք յիշատի մեր գրականութեան մէջ յայտնի են իբրև յարգելի, ազնիւ խմբագիրներ և իբրև շնորհը ունեցող գործիչներ: Մնացածների մեծ մասը կողմակի պաշտօնների վարող մարդիկ են, որոնք անունով միայն խմբա-դիր տիտղոսն են կրում, որովհետև ամիսը մի տող անգամ չեն գրում, և նոյնքան իրաւունք ունեն գրող, կամ հրատարակչութիւն կոչվելու, որքան և ամեն ինչ...

Եւ ճշմարիտ. այդ մարդիկ խմբագիր են համար-վում, թերթի են հրատարակում, բայց եթէ մի ամբողջ տարի մտածէք, թէ ինչ են արել տարիների ընթացքում, ինչ է եղել դրանց հասարակա-կան իղէալը, ձրն է դրանց գրչի արտադրու-թիւնը, — կը գաք այն եզրակացութեան, որ ոչինչ չեն արել, և միայն զբաղված են եղել ուրիշնե-րի արածը ծածկմանով:

Դա ինչ է ցոյց տալիս, — այն, որ ժամանակակից հայոց մամուլի ղեկավարները, շատ քիչ բացա-ռութեամբ, անշնորհ, անտաղանդ, ոչինչ հա-սարակական իղէալ չունեցող գրական կա-պաւորուներ են, որ պատահմամբ ընկել են գրական ասպարէզ...

Դա փաստ է, թէև շատ տխուր փաստ: Վերջին նկատողութիւն. ինչպէս երևում է, Մխիթարեանները Թիւրքիայի համար ուրիշ պատ-կեր են տպագրել, որովհետև միայն «Մշակի» անունը բաւական է, որ այդ պատկերը ընդ միշտ արգելվի Թիւրքիայում և հաւանքի այնտեղ:

ԹԻՒՐԿԻԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՆԵՐԸ

Հետեւեալ տեղեկութիւններն են հաղորդում մեզ Բաթումից. «Մի քանի օր սրանից առաջ, Մուշի և խնուսի գաւառներից 16 հոգի տղամարդիկ են ճանապարհ ընկնում դէպի Բաթում, որոնք երբ հասնում են սահմանադրին, ուստի սահմանա-պահ զինուորները բռնում են նրանց՝ անցադրե-ր չունենալու համար, և բերում տեղական ոստիկա-նութեան յանձնում: Այստեղի թիւրքաց հիւպա-տոսը լսելով այդ, պահանջում է, որ այդ մարդ-կանց իրան յանձնեն: Ոստիկանութիւնը յանձ-նում է:

Այդ մարդկանց բանտարկել տալով, հիւպատոսը հեռագրում է Տրապիզոնի վալիին և տնօրէնութիւն խնդրում նրանց կրկին յետ վերադարձնելու հա-մար: Բայց վալին ոչ միայն չէ համաձայնում, որ այդ մարդիկ յետ ուղարկվեն, այլ և հրամա-նում է, որ բոլորովին արգելեն Թիւրքիա մտնելու թէ այդ 16 հոգուն և թէ առհասարակ Մուշի, խնուսի, Սասունի, Վանի և Բաղէշի կողմերից Ռուսաստան եկած բոլոր մշակներին, նոյն իսկ անցադրեւ ունեցողներին էլ:

Դրանք միմեջ պարտք մի ամսից մինչև մի տարի ժամանակով ամեն մէկին իր յայտարարած դու-մարի 250/0-ից ոչ աւել, այն էլ ուրիշ երկու ան-գամից երաշխագրութեամբ. իսկ եթէ անգամի պահանջած աւելի չէ ընկերութեանը տուած իր տոկոսների 750/0-ից, այն ժամանակ տրվում է այդ անգամի ձեռագրութիւնով միայն, առանց որ և է երաշխագրութեան: Պարտք տրվում է 60/0-ով, որը ստացվում է նախօրէն: Տոկոս չէ վերցնում միայն բացառիկ դէպքերում:

Ընկերութիւնը ունի վարչութիւն՝ բաղկացած վեց անդամից և հաստատարատարների մասնա-ժողով՝ բաղկացած 36 հոգուց: Թէ վարչութեան և թէ մասնաժողովի անդամները ընտրվում են ա-մեն տարի ընդհանուր ժողովից:

Ահա փութադարձ օգնութեան ընկերութիւնը, ահա այդ ընկերութեան կանոնադրութեան գլխա-ւոր կէտերը:

Կանոնադրութեան վերջին 84 և 85 յօդուած-ները վերաբերում են ընկերութեան փակման: Ե-թէ որ և է պայմաններով կամ երբ և իցէ ան-հրաժեշտ կը համարվի ընկերութիւնը խափանել, այն ժամանակ բոլոր անդամների 2/3 ձայնով պէտք է որոշվի ընկերութեան դրամագրութիւնը, շար-ժական և անշարժ կալքը դարձնել տեղւոյսը: Թղթեր և դնել ի պահեստ պետական բանկի տե-

Անցադրեւ չունեցող այդ 16 հոգուն հիւպա-տոսը յետ է դարձրել տեղական ոստիկանութեան, տակաւի՝ «ինչ ուղում էք արեք, դրանց Թիւրքիա յետ ուղարկել չենք կարող»: Այդ մարդիկը դեռ բռնված են: Թէ ինչպէս կը վճովի այդ խեղճե-րի վիճակը, դեռ յայտնի չէ:

Այստեղից Թիւրքիա հայ մշակների համար եր-թեկութիւնը համարեա թէ բոլորովին դադա-րած է՝ ինչպէս մարդկանց, նոյնպէս և նամակադ-րութեան: Հաղարատը մշակներ կան, որոնք ար-տաստակի աչքերով հայրենիքից նամակների են սպասում, բայց չեն ստանում՝ ճանապարհները և պօստը կապված լինելու պատճառով:

ՄԱՍՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ութսուն տարի սրանից առաջ Պետերբուր-գում հրատարակվեց առաւել լեզուով մի գիրք «Жизнь Артемия Арапетского», որի հեղինակը իր կենսագրութիւնը պատմելով՝ նպատակ է ու-նեցել մի և նոյն ժամանակ ծանօթացնել ան-ցեալ դարում Արարատեան ու Կովկասեան երկիր-ներում պատահած անցքերի հետ:

Մի այդպիսի ժամանակ, երբ ուսու հասարա-կութիւնը շատ քիչ ծանօթութիւն ունէր կովկա-սեան ազգերի վարք ու բարքի, աւանդութիւննե-րի, սովորութիւնների և պատմական անցեալի հետ, Արարատեան աշխատութիւնը ընդունեց իւ-րն մի լուրջ գրութեան և պատմական, տոհմագ-րական ու տեղագրական արժէք ունեցող աշխա-տութիւն: Եւ շատ ուսու հեղինակներ, Կովկասը ուսումնասիրելիս, ի նկատի են ունեցել այդ աշ-խատութիւնը և օգուտ քաղել նրանից:

Ինչեւի՞նչ ուսուներն լեզուով գրված և հրատա-րակված 80 տարի սրանից առաջ, հայ հասարա-կութիւնը միջոց և առիթ չունէր մօտիկուց ծա-նօթանալու այդ գրքի և նրա գրական արժէքի հետ, և ըննադատութեան ենթարկելու:

Եւ ահա 1892 թիւին Թիֆլիսի հայոց Հրատա-րակչական ընկերութիւնը լոյս ընծայեց այդ գրքի հայերէնը՝ թարգմանութեամբ Պ. Պ.—ի: Թարգ-մանիչը հարկաւոր է համարում իր կողմից աւե-լացնել, որ իբր «Յարութիւն Արարատեանը եղել է աստիճանով իսկական պետական խորհրդական և Ռուսիոյ մայրաքաղաքում վայելել է նախարար-ների ու մեծամեծների սէրն ու յարգանքը և եղել է սալոնների թանկագին հիւրը»։ որ իբր թէ նա, բա-նալիքներէն և գերմաներէն, և թէ այդ աշխատու-թիւնը լրագրագրութեան յիշողութիւնները պարու-նակող մի գիրք է և արժանի ունենալու ամեն մի բանասէրի սեղանի վրայ:

Արարատեան կենսագրութեան հայերէն թարգ-մանութեան առիթով, այս օրերս Բագուի «Արօր» տպարանից լոյս տեսաւ մի ըննադատա-կան գրութեան՝ «Յարութիւն Արարատեանի կեղ-ծիքը» վերնագրով, աշխատութիւն Ա. Ն. Ս., որի մէջ ցոյց է տրված այդ գրքի բուն արժէքը և նը-շանակութիւնը: Բանից դուրս է գալիս, որ այդ

Արարատեան գիրքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ դուս-տասագրութիւն մի շարք, որ հեղինակը թաղցրել է իր իսկական կեանքի պատկերը, որ նա եղել է ոչ թէ ճանապարհների ու մեծամեծների սէրը վայելող մի բարձրաստիճան անձն, իսկական պե-տական խորհրդական, այլ մի ստորաստիճան չի-նովիկ, գուբերնսկի սեկրետարի տիտղոսով, և մի կատարեալ արկածախնդիր մարդ:

Եւ այդ ամենը հեղինակը ապացուցանում է մանրամասն ըննադատութեան ու անհրաժեշտ փաս-տերի միջոցով և կուսկածի որ և է առիթ ու տեղիք չէ թողնում:

Իսկպէս այդ տեսակ մի գիրք արժանի չէր այդ աստիճանի մանրամասն ըննադատութեան. բայց ի նկատի ունենալով, որ Արարատեան գիրքը ոչ միայն երկար ժամանակ ծառայել է ուսու հեղի-նակների համար իբրև ուղեցոյց, այլ և թարգ-մանվել է նաև անգլիերէն և գերմաներէն լեզու-ներով, պէտք է խոստովանել, որ այս ըննադատու-թիւնը նպատակաւոր մի աշխատութիւն է: Գիրքը աւելի իր նպատակին կը հասնէր, եթէ թարգմանվէր և առաւել լեզուով: Գրքի զինն է 50 կօպէկ:

ՆԱՄԱԿ ԱՆԱԼՅԻՍԱՅԻՑ

Սեպտեմբերի 26-ին

Սեպտեմբերի 25-ին կատարվեց մեր քաղաքային վարչութեան 15 հաւատարմատարների ընտրու-թիւնը: Ընթերցողներին յայտնի է, որ անցեալ օ-գոստոսի 7-ին քաղաքային 15 հաւատարմատար-ներ ընտրվեցին. սակայն Թիֆլիսի նահանգապե-տը այդ ընտրութիւնը անվաւեր համարեց և նշա-նակեց նոր ընտրութիւն, որովհետև անցեալ ընտ-րութեանը մասնակցել էին և քաղաքում մշտա-պէս բնակութիւն հաստատած հրէաները, մինչ-դեռ այդ հակառակ է նոր օրէնքի արամադրու-թեան: Հրէաների անցեալ ժողովին մասնակցելը թիրախացութեան արգասիք էր:

Ժողովին նախագահում էր քաղաքապետ Տէր-Գրիգորեան, որը նիստը բանալով, յայտնեց նախ-կին ընտրութեան բեկման պատճառը, ներկայ ժողովի նպատակը և կարգաց օրէնքի այն յօ-դուածները, որոնք վերաբերում են ընտրողական ժողովին: Ժողովին մասնակցում էին 67 իրաւա-հաս անձինք: Առաջարկվեցին թեկնածուներ, ո-րոնցից բուէարկվելու համաձայնութիւն յայտնե-ցին 30 հոգի: Չայնրի մեծամասնութեամբ հա-ւատարմատարներ ընտրվեցին հետեւեալ անձինք. Ն. Տէր-Գրիգորեան (քաղաքապետ), Գր. Մովսի-սեան (քաղաքային վարչութեան անդամ), Բ. Ա-րաքաշեան (մէշչանների աւագ), Յ. Ղազարոսեան, Մ. Ալիսանեան, Կ. Ղապալաշեան, Մ. Պետրո-սեան, Յ. Հայրապետեան, Յ. Չիլիկաբեան, Գր. Աղաջանեան, Մ. Մովսիսեան, Մ. Բալբուրդեան, Յ. Ղաւաշեան, Ս. Տէր-Կարապետեան, Մ. Գիւլ-պէնկեան, Միլի. Մէպիսով, Խ. Բոսայեան, Գ. Բուրաշեան, Մկր. Մուրադեան և Գր. Խաղաղեան: Սրանցից վերջին հինգը մնում են կանդիդատներ: Այս ընտրութեան ժամանակ նոր հաւատարմա-

դամը միմեջ պէտք է գրկվի իրաւունքից, միմեջ ընկերութիւնը պէտք է մոռանայ իր այն անդա-մին, որ 10—15 տարի շարունակ վճար է տուել և նրան ապաւինել...

Գրեցուք «Ես ազնիւն» չէ փոխադրում, առողջութիւնն է այդ պահանջում. միմեջ ընկերութիւնը սառնա-սրտութեամբ պէտք է մոռացութեան տալ իր այն հիւանդ անդամին, որը 10 տարի դիցուք անդամ լինելուց յետոյ՝ այժմ բժշկների խորհրդով հար-կադրված է հայրենիք վերադառնալ՝ առողջութիւ-նը վերականգնելու համար... Այդպիսի վերաբեր-մունք ընկերութեան կողմից կը լինէր, առնուազն, անարդարութիւն:

Ընկերութեան օգնութիւնը իր անդամներին տե-ղի է ունենում այն ժամանակ, երբ անդամը անգործ է, հիւանդ է կամ մի առանձին դժբախ-տութեան մէջ է դտնվում, այսպիսով տալիս է միանուագ փող, տոկոսով և առանց տոկոսի պարտք, ժամանակաւոր ու մշտական նպաստներ: Ընկերութիւնը և գտնում է գաղութներ, անգործ-ների համար գործ: Իսկ ապագայում, բաւարար միջոցներ ձեռք բերելուց յետոյ, պէտք է ունենայ ձեռացած և հիւանդ անդամների համար ապաս-տարան, հիւանդանոց և այլ բարենպաստակ հիմ-նարկութիւններ:

Ընկերութեան անդամներից իւրաքանչիւրին

բոլորը տեղի է ունենում դեռ առաջին քայլում, 2—3 ժողովներից յետոյ: Եթէ այսպէս շարունակ-վելու լինի, նորահաստատ ընկերութեանը անկաս-կած պէտք է վիճակվի մի նախանձիկ դրութիւն:

Սակայն մի կէտ կատակածի է դարձնում այդ խոստումները:—Յիրաւի, ինչպէս չը կասկածել, ինչպէս թերահաւատ չը լինել դէպի այդպիսի խոստումները: Մարդիկ երկար տարիներ ապրում են այստեղ և ոչ մի կերպ ձրի ծառայութիւն չեն մատուցել կարօտեալներին, օգնելու, բժշկելու պատրաստակամութիւն չեն յայտնել հրատարակու-րէն, իսկ այսօր պատրաստակամութիւն են յայտ-նում ձրի ծառայութիւններ մատուցանելու մի բաղանջով ընկերութեան, որի անդամները ան-համեմատ բարեք վիճակի մէջ են գտնվում, քան թէ հաղարատը արհեստագործներ ու բանագործներ, որոնք յիշատի կարեկցութեան են կարօտ...

Ինչով բացատրել օգնութեան առաւել կարօտ-ներին թողնել առանց ուշադրութեան, ոչ մի անգամ չը յայտարարել ձրի ընդունելութեան ժամանակի մասին, և յանկարծ մարդասիրութիւն կարեկցութիւն արտայայտել մի ընկերութեան, օ-րի անդամները մեծ մասամբ ինտելիգենտներ են և համեմատաբար ապաստով մարդիկ...

Ն. Գ.

տարներ ընտրվեցին՝ Մ. Պետրոսեան, Գր. Աղա-
ջանեան, Յ. Զիլինգարեան և Ալիսանեան, որոնք
անցեալ օգոստոսի 7-ի ընտրութեան ժամանակ
չէին ընտրվել։ Իսկ մնացածները նոյնն են, ինչ
որ անցեալ ընտրութեանը։
Մի այլ անգամ կաշխատեցը աւելի մանրա-
մասն խօսել մեր նորընտիր հաւատարմատարների
մասին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՈՒԹԵԱՆ

Լեւոնիստ, սեպտեմբերի 25-ին

Յայտնի է, որ մեզանում գրական աշխատու-
թիւնը հեղինակներին չէ ապահովեցնում ներթա-
պէս, բայց որքան և իցէ մի բան տալիս է։ Ե-
րեակայեցեք այժմ, թէ ինչ կը լինի հեղինակի
զրուիչները, եթէ այդ մի քիչ բանն էլ յափշտա-
կեն գրաչարչին երբ՝ հրատարակելով հեղի-
նակի աշխատութիւնները իբրեւ իրանց սեփական-
նութիւն։ Բաւական է, որ ամեն մի վաճառված
գիրք մի քանի տասնեակ ընթերցող է ունենում,
ընթերցողներ, որոնք զիրք գնելու սովորութիւն
չունեն, այլ միշտ ձրի են կարդում։

Եթէ այս ձրիակները չը լինէր,
չաւ լաւ վաճառքով կը լինէին հեղինակները։
Ապացոյց իմ ասածին՝ դասագրքերը, որոնք բա-
ւական լաւ վաճառքով են հեղինակներին և յորի-
նոցներին, որովհետեւ ամեն մի աշակերտ ստիպ-
ված է իր սեփական դասագրքերն ունենալ։

Սակայն հնչեւ բան չէ լաւ դասագիրք յորինելը,
որովհետեւ յորինողից պահանջվում է մանկավար-
ժական հմտութիւն, բարոյական և մտաւոր զար-
գացում, և հմտութիւն նոյն գիտութեան, որի
համար դասագիրք է կազմում։ Իսկ եթէ յորինելի
դասագիրքը մայրենի լեզուին է վերաբերում, այդ
ժամանակ մի քանի բան է աւելի է պահանջ-
վում յորինողից, այն է՝ հմտութիւն աղբյուրին
կենսի, մանկական հոգեբանութեան, ծանօթու-
թիւն բանասիր գրականութեան և բարբառների
և աղբյուր բանաստեղծի շնորհ։

Այս պահանջները շատ չեն, եթէ ի նկատի
ունենանք, թէ որքան աղքատ է մեր գրականու-
թիւնը ընտիր և մշակած նիւթերի կողմից։ Այս
պակասը պէտք է լրացնէ ինքը յորինողը, այդ
շնորհովը նա օժտված պէտք է լինի։ Այս է
պատճառը, որ գրականութեան մէջ մանկական
բաժինը ամենից դժուարն է։

Աւելի հնչեւ թարգմանելը կամ փոխադրելը,
և աւելի ևս հնչեւ եղած դասագրքերից ծաղկա-
քաղ անելը, հիւսելը, ինչպէս արել է մօտ օ-
րերս ոմն Յ. Հաղարէկեանց և հրատարակել
է Գիւտ քահանայ Աղանեանց, թէ և շատ ան-
շնորհ և անճշտի կերպով։ Այդ Հաղարէ-
կեանցը սեփականացրել է իմ միջոցը և մի-
տանեակ գրութեանը իմ ինքնուրոյն աշխա-
տութիւններից, որոնցից մի քանիսն աղա-
ւադրել է մի քանիսն անաւարտ թողել։ Մի
նոյնքան յօդաւորներ էլ վերցրել է Տէր-Վան-
դեանցի և Մանգիլեանցի դասագրքերից, դար-
ձեալ աղտաւարելով մեծ մասամբ։ Իսկ ինչ որ
ինքն է յորինել, Աստուած փրկի աղաւթի, թէ
որքան անճշտի բաներ են դրանք և մինչև ան-
գամ անբարոյական։ Օրինակ, մի յօդուածում ծաղ-
րի առարկայ է շինում քահանային, որին զիւղա-
ցիք գցում են մի արջի բնի մէջ և այնտեղից
դուրս քաշում դուռը կտրված։ Այսպէս տուն են
տանում անգլուստ տէրերին և Թիւրքոս հարց-
նում, թէ՛ տէրերն անգլուստ են եղել, թէ՛ զրկու-
թիւն։

Չը գիտեմ, պատասխանում է երէկցիկը, բայց
իրիկունը հաց ուտելիս միւրեքը տաքածում էր։
Այս հանգամանքի վրա կարծել, որ մեր ծխա-
կան ուսուցիչներին նախագահ քահանայները
ուղադրութիւն դարձնէին, եթէ անբաղդութիւն
կունենան իրանց դպրոցում ընդունելու այդ
դրաչարչի կան արտադրութիւնը, որ կըր-
թական գործի հետ ոչ մի կապ չունի։

Փողովորդական անկեղծանքի մէջ կան նաև
բաւական անուանված ասացուածներ. միթէ
կարելի է դրանց դասագրքեր նիւթ չինել։ Կան
նաև այնպիսի չափազանցած երգիծական բա-
ներ, որոնք մի գիւղացիների կողմից յորինվում են
միւս գիւղացիների դէմ՝ նրանց ջգրեցնելու
համար։ Այդ Հաղարէկեանց պարոնը վերցրել է
նաև այս տեսակ բաներ, ինչպիսին է ասղա-
պատու և շաքարու առաւել։ Այս բոլորի վրա
աւելացրել է և մի այնպիսի հեղինակ, որ ամեն
չէնք ու շնորհից դուրս է և ցոյց է տալիս

աշխարհ, որ դասագիրք կազմողը այդ մասի մէջ
ևս շատ թոյլ է։

Այս և սրա նման ուրիշ հանգամանքներից
ստիպված՝ յայտարարում եմ ահա ի լուր ամե-
նեցուն, որ ոչ ոք իրաւունք չունի իմ որ և է
ինքնուրոյն գրութեանը առանց իմ թոյլտուութեան
արտատպելու։

Էլ հայտնեմ չէ մնացել, որ այդ դրա-
չարչին երբ թափած չը լինեն ինձ վրա,
թէ և միշտ էլ իմ լուր արհամարհանքին են ար-
ժանացել, բայց այսօր չեն քաշվում շահվելու
իրանց ատած մարդու աշխատութիւնից։

Վ. Աղաբեկ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պօլսից մեղ գրում են. «Երէկ, սեպտեմ-
բերի 20-ին, կառավարութեան առաջարկու-
թեամբ, չորս էֆէնդիներ՝ Նուրեան Յովհան-
նէս (Ջէյթունի մէջ բերդ մը կառուցանել
տալու չարագուշակ գաղափարի հեղինակը), Նո-
րատունեան Գաբրիէլ, բժիշկ Սերիլին խոր-
հրակցութեան գումարուր են Արթին փաշայի
հետ, այս վերջինս ապարանքը, հայկական խնդ-
րին նորէն յուզուելուն առթիւ. իրենց եզրակա-
ցութիւնները պիտի մատուցանեն սուլթանին»։

Մեղ հաղորդում են, որ հայոց դերասանները,
ընկերաբար, իրանց պատասխանատուութեամբ,
ուզում են շուտով մի քանի ներկայացումներ տալ
Ինչպէս յայտնի է, մինչև այժմ ոչ մի մասնաւոր
մարդ, և ոչ էլ մի որ և է մասնաժողով յանձն
չէ աւել, ինչպէս եղաւ անցեալ տարիների ըն-
թացքում, առաջ տանելու հայոց ներկայացումնե-
րի գործը։ Այսպիսով, կամայ ակամայ, դերասան-
ները իրանք պէտք է հոգան այս տարի թիֆլիսում
ներկայացումներ տալու մասին։

Կովկասում ապրող յոյները, ինչպէս հաղորդում
է «Revue d'Orient» լրագիրը, անգաղար դիմում
են յունաց կառավարութեանը՝ խնդրելով դիւրու-
թիւններ տալ իրանց՝ գաղթելու Կովկասից։ Որով-
հետեւ Կովկասում ապրող յոյները մեծ մասամբ
երկրագործներ են, այդ պատճառով խնդրում են
նրանք յունաց կառավարութիւնից՝ հողեր տալ
իրանց թէ՛ աշխարհում։ Վերջինիս յոյների երեք
պատգամաւորները արդէն Աթէնք են գնացել և
ներկայացել Տրիվուպիին։

Ներկայումս Բաղուսին է գտնվում պարսկական
երկաթուղիների կառավարիչ Բառալման, որը և-
կել է վարպետների վարձելու՝ Պարսկաստանում եր-
կաթուղի կառուցանելու համար։

Մեղ խնդրում են տպագրել հետեւեալը. «Թիֆ-
լիսի Բարեգործական ընկերութեան նախագահու-
հին, Եւդոկիա Բորիսովնա Երեմէտեւա, իր
պարտքն է համարում շնորհակալութիւն յայտնել
Յ. Թուրեանց, Ս. Վարդանով և Ա. Աւետի-
սեանց թիֆլիսի վաճառականներին՝ Նաղէժեան
Ապաստարանի երկրաների շորերի համար չորս
կտոր նուրբելու համար, և զինքնվաճառ Կուզան-
ովին՝ 25 րուբլի նուրբելու համար նոյն ապա-
ստարանի մէջ տեղեկօն չինելու նպատակով»։

Եկող 1895 թին անշարժ կալուածքներից
աւելող պետական և զէմստվոյ հարկերը շատ
քաղաքներում մի փոքր կը բարձրանան, որով-
հետեւ երկաթուղիները գանձարանի սեփականու-
թիւն են դարձել։ Բանն այն է, որ քաղաքներից
աւելող պետական և զէմստվոյ հարկերը որոշ-
վում են ընդհանուր գումարով և ապա արդէն
դաւանյի կողմից ընտրված յատուկ յանձնաժողովը
բաժան բաժան է անում հարկը առանձին անշարժ
կալուածքների վրա։ Մինչև որ երկաթուղիների
չինութիւնները պատկանում էին մասնաւոր ըն-
կերութիւններին, նրանցից հարկ էին վերցնում
նոյնպէս, որպէս և մասնաւոր չինութիւններից։
Իսկ արդեւական չինութիւններից օրէնքով հարկ
չէ վերցվում, եթէ վարձով չեն տրվում։ Հետեւ-
բար, այն ամբողջ դաւանարը, որ մինչև այժմ վաճա-
րում էին երկաթուղիական վարչութիւնները, պէտք
է վճարեն քաղաքային անշարժ կալուածքների
տէրերը։

ԲԱԹՈՒՄԻՑ մեղ գրում են. «Սեպտեմբերի 25-ին
մեր քաղաքում տեղի ունեցաւ Կարա-Մուրզայի
առաջին կոնցերտը։ Հասարակութիւնը մի քանի
անգամ դուրս կանչեց Կարա-Մուրզային՝ ծափա-

հարութեան և «կեցցե՛ներ» ահալին զղրելուն։
Հանգիստականների ուրախութեան չափ չը կար-
այս առաջին անգամն է, որ Բաթումում հայերէն
լեզուով խմբական երգեր են լսվում։ Չը նայած որ,
այստեղի սովորութեան համեմատ, ոչ ոք չէր աշխա-
տել տոմսակ ծախելու, բայց և այնպէս դահլիճում
շատ քիչ տեղեր էին մնացել դատարկ։ Բաթումում,
ընդհանրապէս, հայերէն լեզուով տրված ներկայա-
ցումները (համերգներ չենք ասում, որովհետեւ մինչև
այսօր չեն եղել) միշտ եղել են յօգուտ որ և է բա-
րեգործական հիմնարկութեան, հետեւապէս և տոմ-
սակները ծախել են նոյն հիմնարկութեան ան-
դամների ջանքերով։ Այդ հանգամանքը, ի հար-
կէ, հասարակութեանը առիթ է տուել թատրոնի
վրա նայելու, որպէս մի միջնորդ մուրացկանի
դեր կատարող հիմնարկութեան վրա։ Յաճախ
է պատահում մեր քաղաքում, որ հասարա-
կութեան մի մասը, չը համակրելով այն հիմ-
նարկութեան, որի օգուտին արվում է ներկայա-
ցումը, տոմսակ չէ գնում։ Կարա Մուրզայի ունե-
ցած աջողութիւնը առաջին փորձ կարելի է հա-
մարել, որ հասարակութիւնը ստիպվեց, առանց
սրահարա աղաչանքի, իր կաթով տոմսակ գնել և
թատրոն գնալ։ Միւս համերգը լինելու է երեք-
շաբթի, հոկտեմբերի 4-ին, աւելի մեծ խմբով և
նոր պրոգրամով։ Յանկանում է՛ք կատարեալ ա-
ջողութիւն»։

ԱԼԷԿՍԱՆԴՐՈՎԻՑ մեղ գրում են. «Սեպտեմ-
բերի 25-ին քիչը կերպով տոնվեց Վահագն Կա-
թողիկոսի օծման տարեդարձը։ Ս. Նշան եկեղե-
ցու բազում նուագում էր զինուորական երաժշ-
տութիւնը, աշակերտները և աշակերտուհիները
երգում էին։ Եկեղեցու բազմ զինքը լուսաւոր-
ված էր»։

ԹԵԼԵԳՐԱՖ, Հայոց Բարեգործական ընկերութեան
վարչութեան նախագահ Արէլ քահ. Սուքիասեան
խնդրում է մեղ տպագրել հետեւեալը. «Եւդո-
կի Սիդորան Գուրիշանեանի յիշատակին, տեղիս
Բարեգործական ընկերութեան ճիւղին նուիրեց
100 րուբլի, որի համար վարչութիւնը պատիւ
ունի յայտնել իր շնորհակալութիւնը»։

ՇՈՒՂԱՎԵՐԻՑ մեղ գրում են. «Շաբաթից
Թիֆլիսի վեց հանրակարգ է բանում ամբողջ տա-
րին անընդհատ։ Բայց ով որ, թէկուզ մի անգամ,
նստել է այդ կառքերից մէկի մէջ, անպատճառ
երկված կը լինի, որ միւս անգամ ոտով գնաց-
ի՛նք կախված է կառապանի կաշիքից, մէկից
պահանջում է մէկ րուբլի, միւսից երեք, որ ժա-
մին քէֆը տայ, այն ժամին պէտք է դուրս գնայ,
որքան մարդ ուզենայ՝ կարող է նստեցնել, կամ
աւելի ճիւղը, — դարսել իրար վրա։ Եւ այս պատճա-
ռով ստիպարական բան է այս ճանապարհին կառ-
քերի շուռ գալը և մարդկանց վնասվելը։ Այս բո-
լոր անկարգութիւններին վերջապէս վախճան
տրվեց։ Շուրաւէրի տանուէր Ս. Պառաւեան
կարգադրեց և պարտաւորեցրեց կառապաններին
ուրիշ հողուց աւել չը վերցնել ամեն մի հանրա-
կառքում, դուրս գնալ հերթով, որոշեալ օրերին
և ժամերին, և սահմանեց որոշ վճար կամայա-
կանութիւնից աղաւթեց և մասվաճառութեան գոր-
ծը։ Համախօսական թիւթով որոշվեց՝ տալ մաս-
վաճառութիւնը մէկին՝ տարեկան մօտ 1,000
րուբլով, յօգուտ գիւղի, և վաճառել ֆոնտը 4—6
կօպէկով։ Հասարակութեան եկամուտի մի նոր
աղբիւր էլ բացվեց։ Շուրաւէրի արօտատեղերը
մինչև օրս արածեցնում էին գիւղի մի քանի ոչ-
խաբատէրներ, մի և նոյն ժամանակ վարձով տա-
լով իրանց ծանօթ թուրքերին՝ յօգուտ սեփական
գրպանի։ Իսկ անշարժ գիւղացին, որ նոյնպէս
նոյն արօտատեղի տէրն է, ոչ մի օգուտ չունէր
այդտեղից։ Տանուէրը այդ արօտատեղը աճուրդի
դրեց՝ յօգուտ հասարակութեան, տարեկան 1,200
րուբլով»։

ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՁԻՆԱԿԱՊՅԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Շանգայից հեռագրում են, որ չինական կա-
ռավարութիւնը որոշել է Մակդոնում պահվող
կայսերական դանձերը տեղափոխել Ինչոյ, որը
գտնվում է Մանչուրիայում, մեծ պատիւ տալով
չէնց այդ քաղաքում ապաստարան էր օրոնում
Խիեն-Էօնգ կայսրը 1860 թին, երբ իմացաւ

անգլո-Պրանական զորքերի մօտենալը, այնտեղ
էլ նա մեռաւ մի տարուց յետոյ։

Չինաց կայսրի քիւնին, իշխան Կօնգը, չի-
նական զորքի հրամանատար Նշանակվեց։ Դա
ապացոյց է, որ Լի-Սուն-Չանը կատարելապէս
կորցրել է իր նշանակութիւնը և կայսրի հա-
ւատը։ Սակայն լուր է պտտում, որ Լի-Սուն-
Չանին շատ պաշտպանում է այրի կայսրու-
հին։ Լի-Սուն-Չանի թշնամիները լուրեր են
տարածում նրա դաւաճանութեան մասին, բայց
այդ լուրերին ոչ ոք չէ հաւատում. սակայն հաս-
տատապէս պատմում են, որ Տաօ-տայ Տիան-ցիլի-
նում, որը կորել է անհետք, թշնամու կողմն է
անցել քաղաքի ուրիշ բարձրաստիճան պաշտօնեա-
ների հետ միասին։ Նրան մեղադրում են դանա-
զան զեղծումների մէջ։ Ասում են, օրինակ, որ
չինական կառավարութեան գնած զէնքերը յայտնի
չէ, թէ ուր են կորել։ Բացի դրանից, մի բարձր-
աստիճան պաշտօնեայ մեղադրվում է այն բա-
նում, որ չէնց պատերազմի սկզբից տեղեկու-
թիւններ էր հասցնում և պաշտօնեային՝ չինական
զորքերի բոլոր շարժումների մասին։

Շանգայից իբրեւ լուր հաղորդում են, որ Չինաս-
տանում մի լուրջ յեղափոխութիւն է պատրաստ-
վում։ Երիտասարդ կայսրը զահնկեց կը լինի և
նրա տեղ գահը կը բարձրանայ իշխան Կօնգի ու-
ղին, որի վրա պարտաւորութիւն կը դրվի խա-
ղադրութեան դաշն կապել Նապոլիոնի հետ։

ՆԱՄԱԿ ԹԻՐԻՔԻԱՅԻՑ

Կ. Պօլսից, սեպտեմբերի 21-ին

Տեղագահ Հմայեակ եպիսկոպոս արթնցրել է
քիչ մը. պատրիարքարանը պատրաստած և պա-
լատ խրկած է Աղբյուրի ժողովի երեսփոխաններու
ցանկը՝ Աղբյուրի ժողովի հաւանական գումար-
ման առթիւ։ Բայց նոյն իսկ այդ պարագան՝
պալատ խրկելը, ժողովին գումարման, եթէ ոչ
անհրաժեշտութիւնը, զէ՛ք շատ դժուարաւ յաջողե-
լը կը ցուցնէ։ Ի՛նչ պիտի ընեն այդ ցուցակը։
Երեսփոխանական ժողովը պիտի ստըկեն, պիտի
մաքեն. բայց ով իրաւունք ունի արդեւորու ե-
րեսփոխանի մը Աղբյուրի ժողովին մասնակցելու,
երբ ատ գումարում է։ Ասանաւարութեան հիմ-
նական սկզբունքն արդէն խախտուած կըլայ
աղով։

Հմայեակ սրբազան հասկնալու էր աղ, քանի
որ, իբր տեղագահ, իրեն պաշտօնն է Աղբյուրի
ժողովի գումարման կանոնադրութեան հակել և
բոտ այնմ պատրիարք ընտրելու ձեռնարկել։

Բայց եկուր տես, որ տեղագահը աւելի ըն-
դարձակ կըմտնէ իր պաշտօնը. «Արեւելին մէջ
առանձին չըջարեալականներով հրամաններ կը
սկսի տալ՝ կրօնի դասաւորութեան, Կ. Պօլս Ե-
կող անպաշտօն եկեղեցականներուն պարտակա-
նութեան ու իրաւունքներուն մասին և այլն»։

Ինքնին հարց կը ծագի, եթէ տեղագահ մը կրնէ
այդ բաները, այն ատեն ինչ հարկ պատրիարք
մը ունենալու. արեւոք ան կուզէ մեղ հասկցնել
Հմայեակ սրբազան։

Եւ կը փորձուինք ալ այդպէս կարծելու. «Հայ-
րենիք» վերջերս յօդուած մը հրատարակելով
բժիշկ Մինէճեանի ամուսնալուծութեան առթիւ,
որ Կաթողիկոսի հրամանով եղած էր, կը հարց-
նէր, թէ ի՛նչ իրաւունքով պատրիարքարանը տա-
կալին հրաման չի տար ինչաւ բժիշկին, մինչ
բարձրագոյն հոգևոր իշխանութիւնը վճիռ արձա-
կած էր արդէն։ Հմայեակ իր արժանապատու-
թեան մէջ վերաբերած, կամ ճիշդ ըսեմք, իր
վարկը ժողովրդի առաջ կորսնցնելէ ահաբեկած,
Բ. Գուրը կը դիմէ իսկոյն, «Հայրենիքին» սաս-
տել խնդրելով։ Ահա թէ ուր հասնում։

Բայց ինչպիսի բաներ ալ պակաս չեն։ Հեռա-
գիրը հաղորդեց, թէ անդիլիական կառավարու-
թեան ստիպումով, սուլթանը ներում շնորհած է
Եզդատի զէպէին առթիւ բանտարկուածներուն
և մահապարտներուն ալ դատական վերաքննու-
թիւն հրամայած։ Ի՛նչ կուզէր, որ ընէ մեր երկ-
չոտ տեղագահը. իսկոյն լուր տարածել կուտայ
պատրիարքարանի պաշտօնեաներուն ձեռքով, թէ
տեղագահի ազգասէր ջանքերուն շնորհիւ
կատարուեցան այդ բոլորը։

ԱՐՏԱԲԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պօլսից մայրաքաղաքի լրագիրներին հե-
ռագրում են սեպտեմբերի 22-ին (հոկտեմբ-

Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 100.